

MASSACHUSETTS HEALTH CARE PROXY

ՄԵՍԵՉՈՒՍԷՑԻ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՓՈԽԱՆՈՐԳԱԳԻՐ

Տեղեկություն, Թելադրություններ և Ձև

Ի՞նչ կ'արտօնե Առողջապահական Խնամքի Փոխանորդագրի Օրենքը

Առողջապահական Խնամքի Փոխանորդագիրը պարզ օրինական փաստաթուղթ մըն է, որ ձեզի կ'արտօնե անուանել ձեզի վստահելի և ծանօթ անձ մը, որպէսզի ձեր փոխարէն առողջապահական խնամքի որոշումներ կայացնէ՝ եթէ որևէ պատճառով և որևէ ժամանակ անկարող ըլլաք այդ որոշումները կայացնելու կամ հաղորդելու: Ամէն պարագայի, ասիկա կարևոր փաստաթուղթ մըն է, որովհետև ան ո՛չ միայն կապ ունի ձեր առողջապահական խնամքին վերաբերեալ որոշումներու, այլ նաև ձեր բժիշկին, ընտանիքին և ձեր խնամքին մէջ ներգրաւուող ուրիշ անձերու հետ ձեր յարաբերութեան հետ: Կարդացէք և հետևեցէք հետևեալ թելադրութիւններուն, որպէսզի ձեր փափաքները ապահովապէս յարգուին:

Առողջապահական Խնամքի Փոխանորդագրի Օրենքին (Մեսեսուէցի Ընդհանուր Օրենքներ, Գլուխ 201Դ) ներքև, 18 տարեկան կամ ատէի մեծ ունէ ձեռնհաս չափահաս կրնայ օգտագործել այս ձևը՝ նշանակելու համար Առողջապահական Խնամքի Գործակալ: Դուք (ծանօթ իբրև «Գլխաւոր Անձ») կրնաք նշանակել ունէ չափահաս անձ՝ ԲԱՑԻ վարիչէն, գործավարէն կամ աշխատատեղէն հիւանդանոցի կամ հիւանդապահական տան նման առողջապահական հաստատութեան մը, ուր դուք հիւանդ էք կամ բնակիչ, ԲԱՑԻ ԵԹԷ՛ այդ անձը ձեր ազգականն է՝ արեան, ամուսնութեան կամ որդեգրութեան ճամբով: Դուք Մեսեսուէց բնակիք թէ ոչ, կրնաք օգտագործել այս ձևը՝ եթէ Մեսեսուէցի մէջ է որ կը ստանաք ձեր առողջապահական խնամքը:

Ի՞նչ կրնայ ընել իմ Գործակալը

Ձեր Գործակալը ձեր առողջապահական խնամքին շուրջ որոշումներ կը կայացնէ այն ատեն *միայն*, երբ դուք որևէ պատճառով ի վիճակի չէք անձամբ այդ բանն ընել: Այս կը նշանակէ թէ ձեր Գործակալը կրնայ ձեր փոխարէն գործել՝ երբ ժամանակաւորապէս ուշակորոյս էք, մահաբունի մէջ էք կամ եւթակայ էք որևէ այլ պայմանի, ուր չէք կրնար կայացնել կամ հաղորդել առողջապահական խնամքի որոշումներ: Ձեր Գործակալը ձեր փոխարէն չի կրնար գործել եթէ ձեր բժիշկը գրաւոր չէ վճռած որ դուք չունիք առողջապահական խնամքի որոշումներ կայացնելու կարողութիւնը: Ձեր բժիշկը այս բանը կ'ըսէ ձեզի՝ եթէ կայ որևէ նշան որ դուք այդ բանը պիտի հասկնաք:

Ձեր լիազօրութեամբը գործելով, ձեր Գործակալը կրնայ կայացնել ամէն տեսակի որոշում, որ դուք պիտի կրնայիք՝ եթէ ի վիճակի ըլլայիք: Եթէ դուք ձեր Գործակալին տաք ամբողջական լիազօրութիւն ձեր փոխարէն գործելու, ան կրնայ համաձայնիլ կամ մերժել որևէ բժշկական դարմանում, ներառեալ այնպիսի դարմանումը, որ կրնայ ձեզ կենդանի պահել:

Ձեր Գործակալը ձեր փոխարէն որոշումներ կը կայացնէ միայն ձեր բժիշկին կամ ձեզի առողջապահական խնամք հայթայթողին հետ խօսելէ, ինչպէս նաև ձեր հիւանդութեան կամ վիճակին ախտաճանաչումին, ախտանշաններուն և բուժման վերաբերեալ բոլոր տարբերակները ամբողջովին նկատի առնելէ ետք: Ձեր Գործակալը օրէնքով իրաւասու է ստանալու ամէն տեղեկութիւն, ներառեալ՝ խորհրդապահական բժշկական տեղեկութիւնները, որոնք անհրաժեշտ են ձեր փոխարէն գիտակից որոշում կայացնելու համար:

Ձեր Գործակալը ձեր փոխարէն առողջապահական խնամքի որոշումները կը կայացնէ կա՛մ ձեր փափաքին և կա՛մ ձեր փափաքին տուած ի՛ր արժեւորումին համաձայն, ներառեալ՝ ձեր կրօնական կամ բարոյական համոզումները: Թերևս փափաքիք նախ խօսիլ ձեր բժիշկին, կրօնական խորհրդատուին կամ այլ անձերու հետ՝ ձեր Գործակալին թելադրութիւններ ընելէ առաջ: Ծատ կարևոր է որ խօսիք ձեր Գործակալին հետ, որպէսզի ան գիտնայ թէ ի՞նչն է կարևոր ձեզի համար: Եթէ ձեր Գործակալը տեղեակ չըլլայ յատուկ պարագաներու հանդէպ ձեր փափաքներուն, ան որոշում կը կայացնէ հիմնուելով այն բանին վրայ, թէ իր կարծիքով ի՞նչը կը ծառայէ ձեր շահերուն լաւագոյն կերպով: Երբ ձեր բժիշկը վճռած ըլլայ թէ դուք չունիք առողջապահական խնամքի որոշումներ կայացնելու կարողութիւնը, եթէ տակաւին ընդդիմանաք ձեր Գործակալին կողմէ կայացուած որևէ որոշումի, ձե՛ր որոշումներն են որ պիտի յարգուին, բացի եթէ Դատարանը վճռէ թէ դուք զուրկ էք առողջապահական խնամքի որոշումներ կայացնելու կարողութենէն:

Ձեր Գործակալին որոշումները կ'ունենան այնպիսի լիազորություն, ինչպիսին դուք պիտի ունենայիք՝ եթե կարող ըլլայիք, և նախամեծար պիտի նկատուին ունէ այլ անձի որոշումներէն, բացի եթէ դուք որոշ սահմանափակումներ մտցուցած էք, կամ Դատարանային Վճիռ մը յատկապէս չեղեալ նկատէ Փոխանորդագիրը:

Ինչպէ՞ս կրնամ լրացնել ձեր

1] Ձևին ճակատը գրեցէք ձեր անուն-մականունն ու հասցէն: Գլխագրեցէք անունը, հասցէն և հեռաձայնի թիւը այն անձին, զոր կ'ընտրէք իբրև ձեր Առողջապահական Խնամքի Գործակալ: **(Անպարտադիր.-** Եթէ կը խորհիք թէ ձեր Գործակալը ապագային որևէ ժամանակ կրնայ բացակայ գտնուիլ, կրնաք երկրորդ անձ մը անուանել իբրև Փոխարինող Գործակալ: Ձեր Փոխարինող Գործակալը կը հրաւիրուի՝ եթէ ձեր Գործակալը չի փափաքիր կամ չի կրնար ծառայութիւն մատուցանել:)

2] Եթէ ձեր Գործակալին լիազորութեան վրայ սահմաններ դնէք, կրնաք դժուարացուցած ըլլալ իր գործը՝ ձեր փոխարէն գործելու անակնկալ պարագաներու: Եթէ կ'ուզէք որ ձեր Գործակալը ամբողջական լիազորութիւն ունենայ ձեր փոխարէն գործելու, պարապ ձգեցէք սահմանափակումներու միջոցը: Բայց և այնպէս, եթէ կը փափաքիք սահմանափակել ձեր փոխարէն ձեր Գործակալին կամ Փոխարինող Գործակալին կայացնելիք որոշումները, նշեցէք զանոնք պարապ միջոցին մէջ:

3] Ստորագրելէ **ԱՌԱՋ**, ձեր մօտ անպայման ունեցէք երկու չափահաս անձ, որոնք վկայ ըլլան և դիտեն փաստաթուղթին ձեր կողմէ ստորագրուիլը: Միակ անձերը որ չեն կրնար վկա նկատուիլ՝ Գործակալն ու Փոխարինող Գործակալն են: Ապա անձամբ ստորագրեցէք փաստաթուղթը: (Կամ, եթէ ֆիզիքապէս անկարող էք, կարգադրեցէք որ երկու վկաներէն տարբեր անձ մը ձեր ցուցմունքով ստորագրէ ձեր անունը: Ձեր փոխարէն ձեր անունը ստորագրող անձը պէտք է իր անունն ու հասցէն նշէ համապատասխան միջոցին մէջ:)

4] Թող ձեր վկաները նշեն թուականը, ստորագրեն իրենց անունները և գլխագրեն իրենց անուններն ու հասցէները:

5] **ԱՆՊԱՐՏԱԳԻՐ.-** Ձևին կոնակը կամ յայտարարութիւններ, որոնք պէտք է ստորագրուին ձեր Գործակալին կամ ունէ Փոխարինող Գործակալի կողմէ: Ասիկա օրէնքով չի պահանջուիր, բայց յանձնարարելի է՝ ապահովցնելու համար որ դուք խօսած էք ձեր խնամքին վերաբերեալ կարևոր որոշումներ կայացնելիք անձին կամ անձերուն հետ, և որ անոնցմէ իւրաքանչիւրը ծանօթ է իր կատարելիք գործին կարևորութեանը:

Ո՞վ պէտք է ունենայ բնօրինակը և պատճենները

Ձեր լրացնելէ ետք, անջատեցէք տեղեկութեան թերթը և հանեցէք ձևի առնուագն չորս պատճեններ: Բնօրինակը դուք պահեցէք դիւրաւ գտնուելիք տեղ մը (*ոչ* ձեր ապահով ներդրումներու արկղին մէջ): Պատճենները տուէք ձեր բժիշկին և/կամ առողջապահական ծրագրին՝ դնելու համար ձեր բժշկական արձանագրութիւններուն մէջ: Պատճեններ տուէք ձեր Գործակալին և ունէ Փոխարինող Գործակալի: Կրնաք յաւելեալ օրինակներ տալ ընտանիքի անդամներու, ձեր հոգևորականին և/կամ փաստաբանին, ինչպէս նաև այլ անձերու, որոնք կրնան ներգրաւուիլ ձեր առողջապահական խնամքին գծով որոշումներու կայացման մէջ:

Ինչպէ՞ս կրնամ փաստաթուղթը յետս կոչել կամ ջնջել

Ձեր Առողջապահական Խնամքի Փոխանորդագիրը չեղեալ կը նկատուի հետևեալ չորս բաներէն որևէ մէկը պատահելու պարագային.-

1. Հետագային ստորագրած էք ուրիշ Առողջապահական Խնամքի Փոխանորդագիր մը:
2. Օրինապէս բաժնուած կամ ամուսնալուծուած էք ձեր կողակիցէն, որ Փոխանորդագիրին մէջ անուանուած է իբրև ձեր Գործակալը:
3. Դուք ձեր Գործակալին, բժիշկին կամ այլ առողջապահական խնամք հայթայթողի բերանացի կամ գրաւոր կը ծանուցանէք թէ կը փափաքիք յետս կոչել ձեր Առողջապահական Խնամքի Փոխանորդագիրը:
4. Կ'ընէք որևէ այլ բան, որ յստակօրէն ցոյց կու տայ թէ կ'ուզէք յետս կոչել Փոխանորդագիրը. օրինակ՝ Փոխանորդագիրը պատռել կամ փնացնել, գիծ քաշելով ջնջել, այլ անձերու ըսել, և այլն:

ՁԵԻԸ ԼՐԱՅՆԵԼԻ ԵՏՔ, ՏՈՒՑՄՈՒՆՔՆԵՐՈՒ ԱՅՍ ԷՋԸ ԱՆՋԱՏԵՑԻՔ: ԱՆՊԱՅՄԱՆ ԽՕՍԵՑԻՔ ՁԵՐ ԳՈՐԾԱԿԱԼԻՆ ՀԵՏ: